

Habitus: Studies in Anthropology and Archaeology 2

Գիտական հոդվածների տպագրության չափանիշներ

- Ներկայացվող հոդվածը չպետք է ներկայացված լինի տպագրության կամ արդեն տպագրված լինի:
- Պահանջվող պայմաններին չհամապատասխանող հոդվածները չեն ընդունվի տպագրության:
- Հոդվածների ընդունման վերջնաժամկետն է 31.05.2016: Նշված ժամկետից հետո ուղարկված հոդվածները չեն ընդունվի տպագրության:

1. Տեքստը պետք է գրել Unicode - Sylfaen տառատեսակով, 12 տառաչափով, իսկ միջտողային հեռավորությունը՝ 1.5
2. Տողատակային տեքստերի (footnote) տառաչափը՝ 10, միջտողային հեռավորությունը՝ 1:
3. Հոդվածը կարող է ներառել առավելագույնը 10 նկար՝ .tif կամ .jpg ֆորմատով: Նկարները պետք է ներկայացվեն նաև առանձին ֆայլերով և լինեն համարակալված տեքստում տեղադրությանը համապատասխան: Ցանկալի է, եթե նկարներն ունենան սեղմ նկարագրություն:
4. Տպագրվելիք հոդվածների լեզուն կարող է լինել հայերեն կամ անգլերեն:
 - Հոդվածը պետք է ունենա անգրեյլեն և հայերեն լեզուներով ամփոփագրեր (abstracts), 10 տառաչափով, Unicode - Sylfaen:
 - Ամփոփագրերը պետք է լինեն առավելագույնը
 - Յուրաքանչյուր արստրակ պետք է ունենա համապատասխանաբար հայերեն և անգլերեն 6-ական բանալի բառեր:
5. Կառուցվածքը: Տպագրության ներկայացվող հոդվածները պետք է ունենան հետևյալ մասերն ու կառուցվածքը.
 - Տիտղոսաթերթ՝ հեղինակ(ներ)ը, ակադեմիական աստիճանը, e-mail-ը, կազմակերպությունը, հոդվածի վերնագիրը՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

- Հղումներն արվում են տեքստում՝ (Abrahamian 2006: 8), (Աբրահամյան 2006, 8), (Աբրահամյան 2006, 8; Աբրահամյան 2011): Հոդվածի վերջում տրվում է գրականության ցանկ:
- Գրականության ցանկը կազմվում է այբբենական հերթականությամբ՝ հետևյալ առաջնահերթությամբ. սկզբում նշվում են հոդվածի լեզվով աշխատանքները, ապա անգլերենով (եթե հոդվածի լեզուն հայերենն է) կամ հայերենով (եթե հոդվածի լեզուն անգլերենն է) աշխատանքները, հետո՝ ռուսերենով, հետո այլ լեզուներով աշխատանքները:

Օրինակ՝

ԾատուրյանՆ.

2007. Ուտեստը և ենթաէթնիկ ինքնությունը իրանահայերի օրինակով / *Հայազգագրության և հնագիտության խնդիրներ-3*, Երևան, «Գիտություն», էջ 174-180:

Hennon Ch. B.

2012. Entrepreneurship, Farming, and Identity: A Phenomenological Inquiry. (Prof. Thierry Burger-Helmchen, Ed.) *Entrepreneurship - Gender, Geographies and Social Context*, pp. 249-294.

Համացանցից օգտագործված հոդվածի դեպքում՝

Հեղինակի ազգանուն, անվան սկզբնատառը (եթե առկա է/ նշված է), հոդվածի ամբողջական վերնագիր/ ժողովածուի ամբողջական վերնագիրը, հրատարակման տեղը, հրատարակչությունը, տարեթիվը, հղման վերջում նշել էլետրոնային էջի հասցեն և նյութն օգտագործելու ամսաթիվը (Եթե հղում է արվում համացանցային ոչ գիտական որևէ նյութի, նշել նյութի տեղադրման ամսաթիվը:).

Օրինակ՝ Kenjar K.

2007. Balkan Culinary Nationalism and Ottoman Heritage, <http://classics.uc.edu/~campbell/Kenjar/Culinary-Nationalism.pdf>, 01.12.2011.

- Հարցազրույցներից տեքստում մեջբերման ձևերը.

– *շեղատառ*, չակերտներում «»:

-Եթե մեջբերվում է միջև չորս տող, ապագրվում է որպես հիմնական նախադասության շարունակություն, օրինակ՝ “Ինչպես նշեց 15 տարիառաջ Գյումրիից Մոսկվա տեղափոխված մեր բանասացներից մեկը. «*Ես տարի ա եղել, էստեղից մաճնի մերան եմ տարել, հետո միշտ իմ մերանը ունեցել եմ, մաճուն եմ սարքել, մենք էդ առածները չենք ուտում*»”:

(Ծատուրյան Ռ.

2014, Ճամփորդող ինքնություն. Ուտեստը ուղեբեռներում, HABITUS 1, էջ 26):

- Եթե մեջբերվում է մի քանի տող կամ պարբերություն, ապա կիրառվում է հետևել սարբերակը՝ (Օրինակ՝ ... Meanwhile, this statement is strikingly similar to what one can often hear regarding the "innate" Christian faith of the Armenians. For example, one priest told me:

"In our nation – no matter what will happen – the roots, something in our blood, will stay faithful. [...] Whether you want it or not, he who is an atheist or a Jehovah's Witness, deep in his heart loves the Armenian Church".

These similar, yet distinctive, discursive practices are aimed at establishing the superiority of each given religious group through claiming its "most genuine" Armenianness.

(Siekerski, K.

2014. So Who is More Armenian? Interrelations and Mutual Perception / HABITUS 1, pp. 153-156)